

Հաստատում եմ
Վայոց ձորի մարզպետարանի
Ներքին աուդիտի բաժնի պետ
_____ Վ. Կարապետյան

ԱՌՌԴԻՏԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

06.05.2016թ.

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ.-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված կարգի, հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 27.04.2016թ.-ի թիվ 42 կարգադրությունը, <<Արենի>> ԱԱՊԿ ՊՈԱԿ-ում անցկացվեց 2015թ.-ի գործունեության ֆինանսական աուդիտ, ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ Ն. Կարապետյանի՝ աշխատանքային խմբի ղեկավար, գլխավոր մասնագետներ՝ Հ.Ավետիսյանի և Խ.Խաչատրյանի կողմից: Աուդիտի աշխատանքներին մասնակից դարձվեցին ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Ա.Մկրտչյանը և հաշվապահ՝ Ի.Սայադյանը:

Աուդիտի հիմնական ուղղությունները.

ա/Ներկայացված հաշվետվություններում և ֆինանսական բնույթի տեղեկություններում արտահայտված տվյալների արժանահավատության ստուգում.

բ/ Ֆինանսական գործառնությունների առանձին տեսակների օրինականության ստուգում.

գ/ Հաշվապահական հաշվառման գրանցումներում արտացոլված տվյալների արժանահավատության ստուգում.

դ/Գնումների համապատասխանությունը <<Գնումների մասին>> ՀՀ օրենսդրության պահանջներին.

ե/ Ակտիվների գույքագրման, առկայության համապատասխանության ստուգում:

Ընդհանուր տվյալներ.

Աշխատանքը կատարեցին Ն.Կարապետյանը, Հ.Ավետիսյանը և Խ.Խաչատրյանը: Ունեն բարձրագույն տնտեսագիտական կրթություն: Ն.Կարապետյանը և Հ.Ավետիսյանը ունեն ֆինանսական վերահսկողության փորձ, ներքին աուդիտորի երեք տարվա աշխատանքային փորձ: Խ.Խաչատրյանը ունի 6 ամսվա ներքին աուդիտորի փորձ:

<<Արենի>> ԱԱՊԿ պետական ոչ առևտրային կազմակերպություն՝ գ. Արենի:

Գործունեության նպատակը՝ բնակչության առողջության առաջնային պահպանում:

Կազմակերպությունը ստեղծվել է ՀՀ կառավարության 2015թ.-ի հունվարի 15-ի <<Գյուղական բնակավայրերում գործող առողջապահական փակ բաժնետիրական ընկերությունները վերակազմավորելու մասին>> թիվ 41-Ա որոշման համաձայն ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2015թ.ի հունիսի 12-ի թիվ 54 որոշմամբ՝ <<Արենի>> ԱԱՊԿ ՓԲԸ-ն (պետական գրանցման համար՝ 65.120.00331) <<Արենի>> ԱԱՊԿ ՊՈԱԿ-ի վերակազմավորման եղանակով վերակազմակերպվելու միջոցով և հանդիսանում է

վերջինիս իրավահաջորդը, որին փոխանցվում են բոլոր իրավունքներն ու պարտականությունները՝ փոխանցման ակտերի համապատասխան:

Կազմակերպությունն ունի ՀՀ զինանշանի պատկերով և իր հայերեն ու անգլերեն անվանմամբ կլոր կնիք, բանկային հաշիվ և անհատականացման այլ միջոցներ:

Հաշվապահական հաշվառումը վարվում է գլխավոր հաշվապահի կողմից:

Հաշվապահական հաշվառման մասին ՀՀ օրենքով սահմանված հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվությունների կազմելու սկզբունքները պահպանված են: Գրանցումները կատարվում են սկզբնական հաշվառման տվյալների հիման վրա՝ շրջանառության տեղեկագրում: Իրականացվում է անալիտիկ և սինթետիկ հաշվառում:

Դրամարկղային գործունեությունը իրականացվում է ՀՀ կառավարության 08.10.2003թ.-ի ՀՀ Դրամարկղային գործառնությունների իրականացման կարգը հաստատելու մասին>> թիվ 1408-Ն որոշման համաձայն:

Ներկայացվել է ՀՀ օրենքների ու այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան ֆինանսական, վիճակագրական և հարկային հաշվետվություններ:

Հաստատված է կազմակերպության հաստիքացուցակը և ծախսերի նախահաշիվը:

Ընտրանքային կարգով համադրեցինք գույքացուցակներով արտացոլված և առկա գույքը, ինչպես նաև դեղորայքի առկա մնացորդը և մատչանում հաշվառված տվյալները: Անհամապատասխանություններ չհայտնաբերեցինք:

Կազմակերպությունում ռիսկի գնահատումը և ներքին վերահսկողությունը

Ըստ ձեռք բերած տվյալների ռիսկը և ներքին վերահսկողությունը գնահատելու համար հիմք ենք ընդունել ԸՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ստանդարտը: Հաշիվների մնացորդների և գործառնությունների դասերի կտրվածքով ապրանքա-նյութական արժեքների հնարավոր կորստի ու յուրացման վրա: Ներքին վերահսկողությանը բնորոշ սահմանափակումների կտրվածքով՝ ներքին վերահսկողության համակարգում խաբեության առկայության հնարավորությունը կազմակերպության ղեկավարության անդամների կամ աշխատողների կազմակերպության ներսում կամ այլ կողմերի միջև գաղտնի համաձայնության գալու հնարավոր լինելու վրա:

Հաշվապահական հաշվառման համակարգի վերաբերյալ բավարար պատկերացում կազմելու, ճանաչելու համար ուշադրություն է դարձվել հաշվապահական հաշվառման գրանցումների, ֆինանսական հաշվետվությունների, հաշիվների և օժանդակող փաստաթղթերի արժանահավատությանը: Վերահսկողության ռիսկի նախնական գնահատումը թույլ է տալիս եզրահանգելու, որ կազմակերպության հաշվապահական հաշվառումը բավարար է գործել, ներքին վերահսկողության համակարգը՝ նույնպես բավարար:

<< պետական բյուջեի պարտքերի վերաբերյալ հաշվետվություն 2015թ.

Անվանումը	Նախատես-ված	Ֆինանս.	հազ.դրամ				Ծեղում
			Դրամարկ. ծախս ըստ հաշվետ.	Դրամարկ. ծախս ըստ աուդիտի	Փաստ. ծախս ըստ հաշվետվ.	Փաստ. ծախս ըստ աուդիտի	
Ընդամենը ֆինանսավորում	32761.3	32542.2	31308.1	31308.1	31512.5	31512.5	-1248.8
Ընդամենը ընթացիկ տարվա նախահաշվով նախատեսված	31646.2	29898.1	31308.1	31308.1	31512.5	31512.5	-133.7
Աշխատավ. և աշխատ. հավասար. այլ վճարներ	24639		24610.7	24610.7	24647	24647	8
Պարտադիր սոց. ապահով. վճարներ							0
Այլ վճարների գնման և ծառայ. վճարման ծախս. որից	7007.2		6697.4	6697.4	6865.5	6865.5	-141.7
Գրասենյակային նյութեր և հագուստ	375		375	375	375	375	0
Կենցաղ և հանրային սննդի նյութեր							0
Դեղորայք և լաբորատոր նյութեր	2302		1945.7	1945.7	1945.7	1945.7	-356.3
Այլ ծախսեր	18.4		18.4	18.4	18.4	18.4	0
Գործառնական և բանկ.ծառ.ծախսեր							0
Ներքին գործուղումներ	40		40	40	40	40	0
Կապի ծառայության վճարներ	819		756.5	756.5	756.5	756.5	-62.5
Կոմունալ ծառայությունների վճար	3452.8		3561.8	3561.8	3729.9	3729.9	277.1
Էլ. էներգիայի ծախսեր	680		669.4	669.4	722.5	722.5	42.5
Վառելիքի և տրանսպորտային ծախսեր	561.6		562	562	562	562	0.4
Ջրմուղ կոյուղուց օգտ. վարձի վճար.							0
Այլ ծախսեր	2211.2		2330.4	2330.4	2445.4	2445.4	234.2
Ընդհանուր բնույթի այլ ծառայ.							0
Ամորտիզացիա							0
Տարեսկզբի դրամ.միջոցների ազատ մնաց.	1115.1	1115.1					0
Վճարովի ծառայութ.		1529					0
Այլ եկամուտներ							

Վճարովի ծառայություններ՝ ատամնաբուժական ծառայություններից մուտքեր՝ 690.0 հազ դրամ, տնտգրաֆիկ ծառայություններից մուտքեր՝ 165.0 հազ.դրամ, լաբորատոր հետազոտությունների ծառայություններից մուտքեր՝ 591.4 հազ.դրամ, 50 տոկոս զեղչով տրամադրված դեղորայքից մուտքեր՝ 61.6 հազ դրամ, տարածքի վարձակալությունից մուտքեր՝ 21.0 հազ.դրամ:

Դեբիտորների և Կրեդիտորների հաշվառման աղյուսակ

	Աշխատավարձ և դրան հավ. այլ վճար.		Սոց ապահ. վճարներ		Կապի ծառայութ.		Էլ էներգ. ծախսեր.		Եղեգնածորի ԲԿ ՓԲԸ		Այլ Դեբիտ. և Կրեդիտ պարտքեր		Ընդամենը	
	D	K	D	K	D	K	D	K	D	K	D	K	D	K
Մճ.01.01.1 ք.													0.0	0.0
Շրջանառու-թյուն 201 ք.													0.0	0.0
Մճ.01.01.15ք.	36.3						38.0						74.3	0.0
Շրջանառու-թյուն 2015ք.	24610.7	24647.0			756.5	756.5	669.4	722.5	484.6	484.6	4786.9	4901.9	31308.1	31512.5
Մճ.01.01.16ք.							15.1					115.0	0.0	130.1

Առ 01.01.16թ. դրությամբ կազմակերպության դեբիտորական պարտքը կազմում է 144.0 հազ.դրամ /60.1 հազ.դրամ՝ շահութահարկի գծով, 6.2 հազ.դրամ՝ բնապահպանության վճար, 68.8 հազ.դրամ՝ պետական տուրք լիցենզիայի համար, 0.5 հազ.դրամ՝ արտոնագրի վճար, 1.0 հազ.դրամ՝ կուտակային վճար և 7.4 հազ.դրամ՝ սոցիալական վճար/։ Կրեդիտորական պարտքը կազմում է 274.1 հազ.դրամ / 15.1 հազ.դրամ՝ էներգետիկ ծառայություններ, 86.2 հազ.դրամ՝ շահութահարկի գծով պարտք և 172.8 հազ.դրամ՝ շահաբաժնի գծով։

հազ.դրամ

Ակտիվ	Տարեվերջի դրությամբ ըստ հաշվետվության	Տարեվերջի դրությամբ ըստ աուդիտի	Շեղում
Ոչ ընթացիկ ակտիվներ որից	36985	36985	0
հիմնական միջոցներ			0
մն.արժ.	36985	36985	0
արժեքը	36985	36985	0
մաշվածություն			0
Ընթացիկ ակտիվներ որից	2860	2860.1	0.1
Նյութեր	1117	1117	0
փոքրարժեք և արագամաշ առարկաներ			0
մն.արժ.	365	365	0
արժեքը	365	365	0
մաշվածություն			0
կարճաժամ. դեբիտ. պարտքեր	144	144	0
որից հաշ. տրված կանխ.վճ.գծ.			0
հաշվ. գնորդ. և պատ. հետ			0
Հաշվ. սոց. ապահ. և ապահովության գծով			0
Հաշվարկներ անձնակազմի հետ			0
Հաշվարկներ անձնակազմի հետ նյութական վնասի հատուցման գծով			0
հաշվարկներ բյուջեի հետ	144	144	0
հաշվարկներ հաշվետու անձանց հետ			0
հաշվ տարբ. դեբիտ. հետ			0
դրամական կան միջոցներ, որից	1234	1234.1	0.1
դրամարկդ			0
հաշվարկային հաշիվ	1234	1234.1	0.1
Հաշվեկշիռ	39845	39845.1	0.1
Պասիվ			0
Սեփական կապիտալ որից՝	39571	39571	0
Լրացուցիչ կապիտալ	36531	36531	0
Հաշվետու տար. չօգ. գույտ շահ.	1135	1135	0
Նախ. կար. չօգ. գույտ շահ.	1905	1905	0
Եկամ. վերաբ. շնորհ.			0
Կարճ. ժամկ. կրեդ. պարտքեր	274	274.1	0.1
այդ թվում			0
հաշվարկ. մատակ. և կապալ. հետ			0
հաշվարկներ բյուջեի հետ	259	259	0
Հաշվ. սոց ապահ. և ապահով. գծ.			0
այդ թվում տույժեր և տուգանքներ			0
Հաշվարկներ անձնակազմի հետ եկամուտների վճարման գծով			0
հաշվարկներ տարբ. կրեդիտորների հետ	15	15.1	0.1
հաշվարկներ հաշվետու անձանց հետ			0
Կարճ. ժամկ. այլ պասիվներ որից	0	0	0
գալիք ժաման. եկամուտներ			0
Հաշվեկշիռ	39845	39845.1	0.1

Մեր կողմից աուդիտի արդյունքներով կազմվել է հաշվեկշիռ, որը հիմք է տալիս եզրակացնելու՝
հաշվեկշիռը տալիս է կազմակերպության հաշվեկշռի ճշմարիտ և իրական պատկերը:

**Դրամական միջոցների հոսքերի մասին
հաշվետվություն**

առ. 01.01.2015թ. - առ 01.01.2016թ.

Ձև N 4

հազ.դրամ

Ցուցանիշների անվանումը	Տող	Գումարն ըստ հաշ.	Գումարն ըստ աուդիտի տվյալների	Շեղում
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	010	1115.1	1115.1	0.0
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր				
Արտադրանքի աշխատանքների, ծառայությունների իրացումից	020	29898.1	29898.1	0.0
Ապրանքների իրացումից	030			0.0
Ընթացիկ այլ ակտիվների իրացումից	040			0.0
Ստացված կանխավճարներից	050			0.0
Կարճաժամկետ ֆինանսական ներդրումների դիմաց հաշվարկված եկամուտներից	060			0.0
Գործառնական այլ գործունեությունից	070	1529.0	1529.0	0.0
Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր	080	31427.1	31427.1	0.0
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր				
Ձեռք բերված արտադրական պաշարների դիմաց	090			0.0
Ապրանքների ձեռք բերման դիմաց	100	2320.7	2320.7	0.0
Կատարված աշխատանքների մատուցված ծառայությունների դիմաց	110	4376.7	4376.7	0.0
Տրված կանխավճարներ	120			0.0
Աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների դիմաց	130	24610.7	24610.7	0.0
Սոցիալական ապահովագրության և ապահովության նպատակով	140			0.0
Առհաշիվ տրված գումարներ	150			0.0
Վճարումներ բյուջե	160			0.0
Գործառնական այլ գործունեության նպատակով	170			0.0
Ընդամենը գործառնական գործունեությունից ելքեր	180	31308.1	31308.1	0.0
Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	190	119.0	119.0	0.0
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ		1234.1	1234.1	0.0

Մեր կողմից դրամական հոսքերի աուդիտ է իրականացվել, որը հիմք է հանդիսանում կազմակերպության կողմից ստացված եկամուտների և կատարված դրամական ծախսերի վերաբերյալ ճշմարիտ կարծիք կազմելու համար:

Կատարվել է կազմակերպության 2015 թ.-ի ֆինանսական և տնտեսական գործունեության վերլուծություն.

Կազմակերպության հաստիքային միավորների թիվը՝ 19:

Կազմակերպության աշխատակիցների թվաքանակը՝ 19 տարվա սկզբին, 19՝ տարվա վերջում:

Ընդամենը նախատեսված դրամական եկամուտներ՝ 31646.2 հազ. դրամ, փաստացի կատարում՝ 31427.1 հազ.դրամ: Որից՝

-պետական պատվերով նախատեսված՝ 30146.2 հազ.դրամ, փաստացի կատարում՝ 29898.1 հազ.

դրամ: Թերակատարվել է 248.1 հազ.դրամի չափով:

-վճարովի ծառայություններ՝ նախատեսված՝ 1500.0 հազ. դրամ, փաստացի կատարում՝ 1529.0 հազ.դրամ: Նախորդ բյուջետային տարվա նկատմամբ մուտքերը ավելացել են 191.0 հազ.դրամի չափով:

- տարվա սկզբի դրամական մնացորդ՝ 1115.1 հազ.դրամ:

- տարվա վերջի դրամական մնացորդ՝ 1234.1 հազ.դրամ:

01.01.2016թ.-ի դրությամբ կազմակերպության դեբիտորական պարտքը կազմում է 144.0 հազ. դրամ:

01.01.2016թ.-ի դրությամբ կազմակերպությունը ունի 274.1 հազ.դրամ կուտակված կրեդիտորական պարտքեր, որը դրամական ազատ միջոցներով ամբողջությամբ ապահովված է: Կազմակերպությունը աշխատել է 430.8 հազ.դրամ շահույթով: Նախորդ աուդիտի ժամանակահատվածում կազմակերպությունը ունեցել է 342.2 հազ.դրամի շահույթ: Շահույթը ավելացել է 88.6 հազ.դրամով:

Կազմակերպությունը սպասարկում է 5218 բնակիչ: Համաձայն գլոբալ բյուջեի՝ հաշվառված բնակիչների թիվը կազմում է 5218 բնակիչ, որից մեծահասակներ՝ 4228 բնակիչ և մինչև 18 տարեկաններ՝ 990 բնակիչ, որը բուժական անձնակազմի աշխատավարձի հաշվարկի հիմք է հանդիսացել: Մեր հաշվարկով հաշվառման քարտերը ամբողջությամբ առկա են, ինչպես նաև նրանցում այցելությունների մասին գրանցումները:

<<Արենի>> ԱԱԴԿ ՊՈԱԿ-ում ըստ հաշվետվության, եկամուտների 95.1 տոկոսը ձևավորվել է պետական պատվերի շրջանակներում, 4.9 տոկոսը գոյացել է վճարովի ծառայություններից: Ծախսումներում աշխատավարձի և աշխատավարձին հավասարեցված այլ վճարների տեսակարար կշիռը կազմում է 78.6 տոկոս /ողջամիտ ծախս է համարվում միջինը 70 տոկոս միջակայքը/, դեղորայք և լաբորատոր նյութեր հոդվածով 6.2 տոկոս, այլ ծախսերը՝ 15.2 տոկոս:

Աուդիտի է ենթարկվել պետական պատվերի շրջանակներում իրականացված բժշկական ծառայությունների արժանահավատությունը: Կատարվել է բժշկական քարտերի ընտրանքային աուդիտ:

Եզրակացություն: Պետական պատվերի շրջանակներում իրականացված բժշկական ծառայությունները արժանահավատ են:

Իրականացվել է դեղորայքի, վիրակապական նյութերի և բենզինի գնումների գործընթացի համապատասխանության աուդիտ և կատարողականի աուդիտ:

Համապատասխանության աուդիտ: Գնման գործընթացը ներառում է գնումների պլանավորումը, գնումների նախապատրաստումը, պայմանագրի կնքումը: Առկա է գնումների պլանը, որը սահմանված կարգով կազմվել և ներկայացվել է ՀՀ Վայոց ձորի մարզպետարան:

Գնումների նախապատրաստում: Սահմանվել է գնումները իրականացնել ՀՀ գնման ընթացակարգով: Գնումների նախապատրաստման համար մարմնի ղեկավարը սահմանել է գնումների համակարգող, պատասխանատու ստորաբաժանում, գնահատող հանձնաժողով: Ամբողջությամբ կիրառվել է ՀՀ կառավարության գնումների գործընթացի կազմակերպման մասին թիվ 168-Ն որոշման 3-րդ գլխի 7-րդ մասի պահանջները: Հանձնաժողովը իր առաջին նիստում հաստատել է հրավերի տեքստերը: ՀՀ-ում ներառված բոլոր հնարավոր մասնակիցներին ուղարկվել է գնման հրավեր, որում ներառվել են ապրանքների տեխնիկական բնութագրերը, անվանացանկը: Սահմանված կարգով գնման հայտ է ներկայացրել մեկ ընկերություն՝ <<Վազա Ֆարմ>> ՍՊԸ-ն: Հայտը գրանցվել է գրանցամատյանում: Հայտերի բացման օրը և ժամին հայտը բացվել է գնահատող հանձնաժողովի նիստում: Հանձնաժողովը արձանագրել է նշված ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկները: Նշված ընկերությունը ճանաչվել է հաղթող ընկերություն, կազմելով համապատասխան արձանագրություն: Հաղթող ընկերությանն ուղարկվել է համապատասխան գրություն, հաղթող ճանաչվելու մասին պայմանագիր կնքելու համար, կցելով պայմանագրի նախագիծը, միակողմանի տուժանքի պայմանագրի առկայության պայմաններում: Ընկերության կողմից ներկայացվել է միակողմանի տուժանքի մասին համաձայնությունը, որի առկայության պայմաններում կնքվել է համապատասխան գնման պայմանագիր:

Կատարողականի աուդիտ: Գնումներ իրականացնելու համար կազմվել են գնման և վճարման ժամանակացույցեր:

<<Վազա Ֆարմ>> ՍՊԸ-ի հետ կնքվել է 2179.1 հազ. դրամի գնման պայմանագիր: Փոխադարձ համաձայնությամբ կատարվել է 2088.4 հազ. դրամի գնում, որը կազմակերպության բնականոն գործունեության վրա ազդեցություն չի ունեցել:

Սահմանվել և իրականացվել է բենզինի գնումը ՀՀ գնման ընթացակարգով: Մրցույթը կայացել է տարեկան կտրվածքով: Գնման ընթացակարգին մասնակցելու համար հայտ է ներկայացրել <<ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ>> ՍՊԸ-ն, որն էլ մրցույթի արդյունքում հաղթող է ճանաչվել 390 դրամ մեկ միավոր գնային առաջարկով նախատեսված 450 դրամի դիմաց: Կնքվել է 1920լ բենզինի գնման պայմանագիր 748,8 հազ.դրամ ընդհանուր գումարով: Փոխադարձ համաձայնությամբ կատարվել է 1440լ բենզինի գնում, որը կազմակերպության բնականոն գործունեության վրա ազդեցություն չի ունեցել: Արդյունքում տնտեսվել է 273.6 հազ. դրամ:

Մեր գնահատմամբ գնումները համապատասխանում են <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի պահանջներին:

Վայոց ձորի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի ներքին աուդիտորներ՝ Ն.Կարապետյանս, Հ.Ավետիսյանս և Խ.Խաչատրյանս իրականացրեցինք <<Արենի>> ԱԱՊԿ պետական ոչ առևտրային կազմակերպության 2015թ.-ի բյուջետային տարվա ֆինանսական աուդիտ առ 01.01.2016թ. դրությամբ: Հաշվապահական հաշվեկշռի և ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատվություն է կրում կազմակերպության ղեկավարությունը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության վերաբերյալ: Աուդիտն անցկացրեցինք աուդիտի ստանդարտներին և գործնական փորձին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է աուդիտը պլանավորենք և իրականացնենք, որպեսզի ունենանք ողջամիտ հավաստում, որ ֆինանսական հաշվետվությունները և հաշվապահական հաշվառման փաստաթղթավորումը և ձևակերպումները արժանահավատ են, էական խեղաթյուրումներից զերծ: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքները:

Մեր կողմից կատարվել է կազմակերպության հաշվապահական հաշվառման ուսումնասիրություն, ֆինանսական և գործառական տեղեկատվության ստուգում, տնտեսական գործունեության նվազագույն ծախսերով իրականացման ուսումնասիրություն, ինչպես նաև օրենքների այլ իրավական ակտերի, կազմակերպության ղեկավարության քաղաքականության, հրահանգների և ներքին այլ պահանջների ուսումնասիրություն: Իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները կազմվել են սահմանված ձևով ֆինանսական հաշվետվությունների հիմունքների պահանջներին համապատասխան: Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների տվյալների արժանահավատությունը գնահատվել է աուդիտի արդյունքներով, որը արտահայտվել է աուդիտի հաշվետվության մեջ:

Եզրակացություն: Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները արժանահավատ են: Կազմակերպությունը ապահովել է տնտեսող, օգտավետ գործառույթների առկայություն, որի արդյունքում աշխատել է 430.8 հազ.դրամ շահույթով:

Արժանագրված թերություններ և խախտումներ:

Պետական պատվերի շրջանակներում բժշկական ծառայությունները թերակատարվել են 248.1 հազ.դրամի չափով:


Համաձայն <<Ներքին աուդիտի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետի նշված թերությունը վերացնելու համար տրվեց համապատասխան խորհրդատվություն:

Առաջարկվեց ՊՈԱԿ-ի տնօրենին՝

ա/ Պետական պատվերի շրջանակներում բժշկական ծառայությունները իրականացնել ամբողջ ծավալով (Առաջարկությունների դասակարգման միջին չափանիշ):

Առաջարկության կատարման վերաբերյալ մեկամսյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն:

Ներքին աուդիտի բաժնի
աշխատանքային խմբի ղեկավար՝
Ներքին աուդիտորներ՝
<<Արենի>> ԱԱՊԿ ՊՈԱԿ-ի տնօրեն՝
Հաշվապահ՝


Ն. Կարապետյան
Ս. Ավետիսյան
Խ. Խաչատրյան
Ա. Մկրտչյան
Ի. Սայադյան